ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«____» _____ 2019թ. N ____- Ա

ՈՐՈՇՈՒՄ

«ՄԱՔՍ ՄԵԴ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԱՌԱՋԱՐԿԻՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԵՎ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 11-Ի N.112-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով քաղաքացիական օրենսգրքի 954-966-րդ հոդվածներով, «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքի 67-րդ հոդվածով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով.

Երևան քաղաքի ավագանին որոշում է .

1. Հավանություն տալ «Մաքս Մեդ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից ներկայացված «Գրիգոր Նարեկացի» բժշկական կենտրոն փակ բաժնետիրական ընկերությունում ներդրումներ կատարելու նոր առաջարկին՝ համաձայն հավելվածի:

2. Երևան քաղաքի ավագանու 2014 թվականի փետրվարի 11-ի ««Գրիգոր Նարեկացի» բժշկական կենտրոն փակ բաժնետիրական ընկերության բաժնետոմսերով հավաստված իրավունքները հավատարմագրային կառավարման հանձնելու մասին» հ.112-Ա որոշման 4-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ հետևյալ բովանդակությամբ.

«4. Սահմանել, որ պայմանագրով հավատարմագրային կառավարչի կողմից ստանձնած երկարաժամկետ ներդրումային պարտավորությունների իրականացման 5-րդ տարում դրանք տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված չափով և ժամկետում լիովին ու պատշաճ կատարելու պարագայում, Ընկերության Երևան քաղաքի սեփականությունը հանդիսացող բաժնետոմսերով հավաստված իրավունքների հավատարմագրային կառավարման պայմանագիրը համարվում է երկարացված 15 տարի ժամկետով:»

3. Թույլատրել Երևանի քաղաքապետին՝

1) «Մաքս Մեդ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հետ կնքել համաձայնագիր՝ 2014 թվականի հունիսի 9-ի պայմանագրում ավագանու որոշումից բխող փոփոխություններ կատարելու մասին:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Հ.ՄԱՐՈՒԹՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

««ՄԱՔՍ ՄԵԴ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԱՌԱՋԱՐԿԻՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԵՎ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 11-Ի N.112-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Սույն որոշման նախագծով նախատեսվում է փոփոխություններ կատարել Երևան քաղաքի ավագանու 2014 թվականի փետրվարի 11-ի ««Գրիգոր Նարեկացի» բժշկական կենտրոն փակ բաժնետիրական ընկերության բաժնետոմսերով հավաստված իրավունքները հավատարմագրային կառավարման հանձնելու մասին» N.112-Ա որոշման մեջ: Մասնավորապես, համաձայն քաղաքացիական օրենսգրքի 954-966-րդ հոդվածների, «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքի 67-րդ հոդվածի և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, սույն որոշման նախագծով նախատեսվում է հավանություն տալ «Մաքս Մեդ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից ներկայացված «Գրիգոր Նարեկացի» բժշկական կենտրոն փակ բաժնետիրական ընկերությունում ներդրումներ կատարելու նոր առաջարկին և թույլատրել Երևանի քաղաքապետին «Մաքս Մեդ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հետ կնքել համաձայնագիր՝ 2014 թվականի հունիսի 9-ի պայմանագրում ավագանու որոշումից բխող փոփոխություններ կատարելու մասին:

Երևան քաղաքի ավագանու 11.02.2014թ. N.112-Ա որոշման՝ 2014թ-ի հունիսի 09-ին Երևանի քաղաքային համայնքի և «Մաքս Մեդ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության միջև կնքվել է բաժնետոմսերով հավաստված իրավունքները հավատարմագրային կառավարման հանձնելու պայմանագիր, համաձայն որի, «Գրիգոր Նարեկացի» բժշկական կենտրոն փակ բաժնետիրական ընկերության կառավարման իրավունքը փոխանցվել է Հավատարմագրային կառավարչին՝ «Մաքս Մեդ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը:

Պայմանագրով սահմանվել է, որ Հավատարմագրային կառավարիչը 2014 թվականի հուլիսի 1-ից սկսած հինգ տարվա ընթացքում պարտավոր է ընկերությունում կատարել ներդրումներ՝ առնվազն 300.150.000 (երեք հարյուր միլիոն մեկ հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամի չափով, որը և կատարվել է ամբողջովին:

2014-2018թթ. կատարվել են ներդրումներ հետևյալ ուղղություններով՝ բժշկական կենտրոնի շենքի վերանորոգման և հիմնանորոգման աշխատանքներ (150,7 միլիոն դրամ), բժշկական սարքավորումների ձեռքբերում (109,7 միլիոն դրամ), տնտեսական գույք և կահավորանք, կադրերի վերապատրաստում և այլ ներդրումներ (39,7 միլիոն դրամ):

Հիմք ընդունելով Պայմանագրի 2.9 կետը՝ 2014-2018թթ. Հավատարմագրային կառավարչի կողմից իրականացված ներդրումները լիցենզավորված մասնագիտական կազմակերպությունների կողմից ենթարկվել են գնահատման և վերջիններիս կողմից տրված եզրակացություններն էլ հիմք են հանդիսացել հաշվապահական համապատասխան ձևակերպումների համար:

Բժշկական կենտրոնի ընդհանուր մուտքերը 2014 թվականին 227,5 մլն դրամից 2018 թվականին աճել է մինչև 561,7 մլն դրամ:

Երևանի քաղաքապետարանի շահութաբաժինը կազմել է ընդհանուր շահույթի 20%-ը:

«Գրիգոր Նարեկացի» բժշկական կենտրոն ՓԲԸ–ում կատարված կապիտալ վերանորոգման ու վերազինման արդյունքում բացվել են մի շարք նոր բաժանմունքներ, ինչպես նաև ընդլայնվել են Ընկերության կողմից մատուցվող վճարովի հիմունքներով և պետական պատվերով իրականացվող ծառայությունների ցանկը:

Հավատարմագրային կառավարման հանձնված տարիներից սկսած, ներդրումային ծրագրի շրջանակներում կատարված կապիտալ ներդրումների շնորհիվ, ընկերության պետական պատվերից և վճարովի ծառայություններից գոյացած եկամուտները կտրուկ աճել են, ընկերությունում բացվել է 57 նոր աշխատատեղ, բարձրացել են աշխատակիցների աշխատավարձերը:

Կատարված ներդրումները նպաստել են ոչ միայն հիվանդանոցային ծառայությունների, այլ նաև արտահիվանդանոցային ծառայությունների զարգացմանը, մատուցվող ծառայությունների որակի բարձացմանը, ծավալների ավելացմանը: Միայն հիվանդանոցային ծառայությունների մասով այցերի թիվը 2018 թվականին կազմել է 3319 այց՝ 2013 թվականի 1573 այցի դիմաց:

«Մաքս Մեդ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից ս.թ. ապրիլի 25-ին Երևանի քաղաքապետին հասցեագրված հ. 1 գրությամբ ներկայացվել է «Գրիգոր Նարեկացի» բժշկական կենտրոն փակ բաժնետիրական ընկերության հավատարմագրային կառավարման նոր ներդրումային ծրագիր-առաջարկ:

Ծրագրով առաջարկվում է 2019 թվականից սկսած պայմանագրային պարտավորությունները լիարժեք և պատշաճ կատարելու արդյունքում 5 տարով (2019-2024թթ.) երկարաձգված Երևան քաղաքային համայնքի և «Մաքս Մեդ» ՍՊԸ-ի միջև 2014 թվականի հունիսի 9-ին կնքված «Բաժնետոմսերով հավաստված իրավունքների հավատարմագրային կառավարման» պայմանագիրը երկարացնել 15 տարի ժամկետով, որի ընթացքում հավատարմագրային կառավարիչը բժշկական կենտրոնում պարտավորվում է կատարել լրացուցիչ 350,0 միլիոն դրամի ներդրում:

Նպատակ ունենալով ապահովել բժշկական կենտրոնի բնականոն և մասնագիտացված գործունեությունը, ինչպես նաև կայուն զարգացման շարունակականությունը, միաժամանակ հաշվի առնելով բժշկական կենտրոնում հավատարմագրային կառավարման ինստիտուտի կիրառման բարձր արդյունավետությունը՝ որոշման նախագծով նախատեսվում է Երևանի քաղաքապետին թույլատրել «Մաքս Մեդ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հետ կնքել համաձայնագիր՝ 2014 թվականի հունիսի 9-ի պայմանագրում ավագանու որոշումից բխող փոփոխություններ կատարելու մասին:

Հավատարմագրային կառավարման հանձնելու ժամկետը երկարաձգելու նպատակն է կատարել լրացուցիչ ներդրումներ, որն ի սկզբանե նախատեսված և ներառված չեն եղել Հավատարմագրային կառավարիչի կողմից ներկայացված նախնական ներդրումային ծրագրի շրջանակներում, և նպատակ ունի ապահովել «Գրիգոր Նարեկացի» ԲԿ ՓԲԸ-ի հետագա զարգացումը:

Ներդրումների կատարման հիմնական ուղղություններն են՝ բժշկական կենտրոնի շենքի վերանորոգման և հիմնանորոգման աշխատանքներ (110,0 միլիոն

դրամ), բժշկական սարքավորումների ձեռքբերում (200,0 միլիոն դրամ), տնտեսական գույք և կահավորանք (20,0 միլիոն դրամ), կադրերի վերապատրաստում (10,0 միլիոն դրամ), այլ ներդրումներ (10,0 միլիոն դրամ):

Ներդրումների իրականացման արդյունքում ակնկալվում է ստեղծել 30 նոր աշխատատեղ:

Հիմք ընդունելով վերը շարադրվածը՝ Երևան քաղաքի ավագանուն է ներկայացվում ««Մաքս Մեդ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից ներդրումներ կատարելու առաջարկին հավանություն տալու և Երևան քաղաքի ավագանու 2014 թվականի փետրվարի 11-ի N.112-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Հ.ՄԱՐՈՒԹՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ
««ՄԱՔՍ ՄԵԴ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԱՌԱՋԱՐԿԻՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԵՎ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 11-Ի N.112-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

««Մաքս Մեդ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից ներդրումներ կատարելու առաջարկին հավանություն տալու և Երևան քաղաքի ավագանու 2014 թվականի փետրվարի 11-ի N.112-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Հ.ՄԱՐՈՒԹՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ
««ՄԱՔՍ ՄԵԴ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԱՌԱՋԱՐԿԻՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԵՎ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 11-Ի N.112-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

««Մաքս Մեդ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից ներդրումներ կատարելու առաջարկին հավանություն տալու և Երևան քաղաքի ավագանու 2014 թվականի փետրվարի 11-ի N.112-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ, համաձայն ծրագրում ներկայացված հաշվարկների, Երևան քաղաքի բյուջե 15 տարիների ընթացքում կվճարվի 120.4 մլն դրամ շահութաբաժին, իսկ ծախսերում փոփոխություններ չեն առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Հ.ՄԱՐՈՒԹՅԱՆ

Հավելված
Երևան քաղաքի ավագանու
2019 թվականի _____-ի N____-Ա որոշման

«ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻ» ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՓԲԸ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ

Նախագծի անվանումը

Ք. Երևան, Նոր-Արեշ 22 փող., 63/1 հասցեում գտնվող «Գրիգոր Նարեկացի» բժշկական կենտրոն փակ բաժնետիրական ընկերության գործունեության զարգացման շարունակականության ապահովում՝ ի հաշիվ լրացուցիչ ***350.0 մլն /երեք հարյուր հիսուն միլիոն/*** ՀՀ դրամ ներդրումների իրականացման։

Բժշկական կենտրոնի մասին

«Գրիգոր Նարեկացի» բժշկական կենտրոն փակ բաժնետիրական ընկերությանը վերակազմակերպվել է Հայաստանի Հանրապետության Երևան քաղաքի ավագանու 2012թ. փետրվարի 14-ի «Գրիգոր Նարեկացի» ԲԿ ՓԲԸ-ն վերակազմակերպելու մասին» հ.399-Ա որոշման համաձայն վերջինից նոր՝ «Նոր Արեշ» պոլիկլինիկա, «Սարի թաղ» պոլիկլինիկա, «Նուբարաշեն» պոլիկլինիկա փակ բաժնետիրական ընկերությունների առանձնացման ճանապարհով։

Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է 28,884.000 (քսանութ միլիոն ութ հարյուր ութսունչորս հազար) ՀՀ դրամ, որը կազմում է 7,221 (յոթ հազար երկու հարյուր քսանմեկ) հասարակ (սովորական) անվանական բաժնետոմս, մեկ բաժնետոմսի անվանական արժեքը կազմում է 4000 ՀՀ դրամ։

Ընկերության բոլոր 7,221 բաժնետոմսերը տեղաբաշխված են, լրիվ վճարված և սեփականության իրավունքով պատկանում են Հայաստանի Հանրապետության Երևան համայնքին։

Ընկերության միակ բաժնետերը Երևան համայնքն է, որի անունից հանդես է գալիս Երևանի քաղաքապետը։

«Գրիգոր Նարեկացի» ԲԿ ՓԲԸ-ն գործունեության ոլորտներն են.

1. Հիվանդանոցային բուժօգնություն

1.1. Պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում մատուցվող հիվանդանոցային բժշկական օգնություն և սպասարկում։

1.2. Պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնության և սպասարկման շրջանակներից դուրս վճարովի հիմունքերով մատուցվող հիվանդանոցային բժշկական օգնություն և սպասարկում։

2. Արտահիվանդանոցային բուժօգնություն

2.1. Պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում մատուցվող արտահիվանդանոցային բժշկական օգնություն և սպասարկում։

2.2. Վճարովի հիմունքերով մատուցվող արտահիվանդանոցային բժշկական օգնություն և սպասարկում։

Բժշկական հաստատության կազմում գործում է հետևյալ բաժանմունքները.

1. Արտահիվանդանոցային ծառայություններ, այդ թվում

1.1 թերապևտիկ ծառայություններ,

1.2 նեղ մասնագիտացված բժշկական օգնություն,

1.3 լաբորատոր-գործիքային ախտորոշիչ ծառայություններ:

2. Հիվանդանոցային ծառայություններ

2.1 մանկաբարձական բժշկական օգնություն,

2.2 գինեկոլոգիական բժշկական օգնություն,

2.3 նորածնային բժշկական օգնություն,

2.4 անկաբուժական բաժանմունք,

2.5 վիրաբուժական բժշկական օգնություն,

2.6 քիթ-կոկորդ-ականջաբանական բժշկական օգնություն,

2.7 դիմածնոտային վիրաբուժություն

2.8 անաբուժական ծառայություն

2.9 վերակենդանացման ծառայություն:

Բժշկական կենտրոնի ստացիոնար ծառայության մահճակալային ֆոնդում առկա է 75 մահճակալ:

Բուժհաստատության աշխատողների հաստիքացուցակը, ամսական անվանական աշխատավարձը և ֆիզիկական անձանց թվաքանակը ներկայացված է աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1

ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻ» ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՓԲԸ –ի ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿ

Հազար դրամ

Հ/հ		Հաստիք	Ընդամենը ամսական անվանական աշխատավարձ	ֆիզիկական անձերի թիվը առ 31.12.2018թ
1	**Տնօրինություն**	**9.50**	**1,622.00**	**7**
2	**Հաշվապահական հաշվառման բաժին**	**4.50**	**459.00**	**4**
3	**Վերլուծության և ծրագրավորման բաժին**	**5.25**	**423.00**	**3**
4	**Տնտեսական բաժին**	**19.25**	**1,655.00**	**19**
5	**Դեղատուն**	**2.0**	**158.00**	**2**
6	**Լաբորատոր-ախտորոշիչ ծառայություն**	**9.25**	**1,008.00**	**11**
7	**Ստացիոնար ծառայություն, այդ թվում՝**	**130.25**	**10779**	**133**
7.1	*Մանկաբարձական բաժանմունք*	*25.00*	*1,930.00*	*26*
7.2	*Հղիության ախտաբանության բաժանմունք*			
7.3	*Նորածնային բաժանմունք*	*15.50*	*1,619.00*	*14*
7.4	*Մանկաբուժական բաժանմունք*	*18.00*	*1,411.00*	*17*
	գինեկոլոգիական բաժանմունք	*10.00*	*781.00*	*13*
7.4	*Վիրաբուժական բաժանմունք*	*24.00*	*1,868.00*	*24*

7.5	*Վիրահատարան, վերակենդանացման և անեսթեզիոլոգիայի բաժանմունք*	*21.00*	*1,800.00*	*26*
7.6	*Ընդունարան*	*16.75*	*1,370.00*	*13*
8	**Ամբուլատոր-պոլիկլինիկական ծառայություն, այդ թվում՝**	**51.25**	**5042**	**57**
8.1	*Ընդհանուր անձնակազմ*	*7.50*	*583.00*	*5*
8.2	*Թերապևտիկ ծառայություն*	*17.00*	*1,686.00*	*14*
8.3	*Կանանց կոնսուլտացիա*	*11.00*	*803.00*	*15*
8.4	*Նեղ մասնագիտական կաբինետներ*	*7.25*	*935.00*	*14*
8.5	*Օժանդակ բուժծառայություններ*	*8.50*	*1,035.00*	*9*
Ընդամենը		**231.25**	**21,146.00**	**236**

«ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻ» ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՓԲԸ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ

1. ԱՌԿԱ ԻՐԱՎԻՃԱԿԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Երևան քաղաքի ավագանու 12.02.2014թ. հ.112-Ա որոշման համաձայն՝ Երևանի ենթակայության «Գրիգոր Նարեկացի» ԲԿ ՓԲԸ-ն հանձնվել է հավատարմագրային կառավարման «Մաքս Մեդ» ՍՊԸ-ին, արդյունքնում՝ Երևան քաղաքային համայնքի (այսուհետ՝ Հիմնադիր) և «Մաքս Մեդ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Հավատարմագրային կառավարիչ) միջև 2014 թվականի հունիսի 9-ին կնքվել է «Բաժնետոմսերով հավաստված իրավունքների հավատարմագրային կառավարման» պայմանագիր (այսուհետ՝ Պայմանագիր), որով սահմանվել են հավատարմագրային կառավարման պայմանները, կողմերի իրավունքները և պարտականությունները։

Համաձայն Պայմանագրի 2.8 կետի՝ Հավատարմագրային կառավարիչը 2014 թվականի հուլիսի 1-ից սկսած հինգ տարվա ընթացքում պարտավորվել է «Գրիգոր Նարեկացի» ԲԿ ՓԲԸ-ում կատարել 300,150.0 (երեք հարյուր միլիոն հարյուր հիսուն հազար) հազար դրամի չափով ներդրումներ (ներառյալ «Գրիգոր Նարեկացի» ԲԿ ՓԲԸ-ի կողմից ստանձնած 69,500.0 հազար ՀՀ դրամ (50,000.0 հազար ՀՀ դրամ վարկ և 19,500.0 հազար ՀՀ դրամ տոկոսավճար) չափով վարկային պարտավորությունների մարումը)՝ Պայմանագրի 4-րդ հոդվածով սահմանված կարգով տարեկան մշակվող, համաձայնեցվող և հաստատվող Հավատարմագրային ծրագրին համապատասխան, ընդ որում՝ տարեկան ծրագրերը պետք է հիմնված լինեն Երևան քաղաքի ավագանու 12.02.2014թ. հ.112-Ա որոշմամբ հաստատված «Մաքս Մեդ» ՓԲԸ-ի բաժնետոմսերով հավաստված իրավունքները հավատարմագրային կառավարման հանձնելու մասին բիզնես-ծրագրի վրա։

1.1 2014-2018 թվականների «Գրիգոր Նարեկացի» ԲԿ ՓԲԸ-ում ներդրումային ծրագրի ուղղությունները

«ՄԱՔՍ ՄԵԴ» ՍՊԸ-ի կողմից կողմից ներդրումները կատարվել են հետևյալ ուղղություններով.

1. ***Ընթացիկ և կապիտալ վերանորոգման աշխատանքներ:***

2014-2018 թվականներին իրականացվել է 150,721.0 հազար դրամի շինարարական աշխատանքներ՝ Պայմանագրով նախատեսված 147,073.5 հազար դրամի դիմաց, կամ նախատեսվածից ավել է կատարվել 3647,5 հազար դրամով: Վերանորոգվել են բուժհաստատության ընդունարանը, պոլիկլինիկան, վիրաբուժական, նորածնային, մանկաբարձական, գինեկոլոգիական, մանկաբուժական, դիագնոստիկ բաժանմունքները, վիրահատարանը և հետվիրահատական բաժանմունքը, ջեռուցման համակարգի կոմունիկացիաները:

2. ***Տեխնիկական վերազինում (բժշկական սարքավորումներ, տեխնիկական սարքեր և օժանդակ միջոցներ, ապարատներ և գործիքներ, ինչպես նաև համակարգչային տեխնոլոգիայի և համապատասխան ծրագրային փաթեթներ, հիվանդանոցային կահույք և լաբորատոր տեխնիկական միջոցներ, հատուկ հագուստ և այլ անհրաժեշտ ձեռք բերմանն ուղղված ներդրումներ):***

2014-2018 թվականներին ձեռք է բերվել 109711,0 հազար դրամի բժշկական սարքավորումներ և պարագաներ, 39751,7 հազար դրամի տնտեսական գույք և այլ ներդրումներ:

3. ***Կադրերի վերապատրաստում.*** Թերևս «կադրերը կանխորոշում են ամեն ինչ» արտահայտությունը առավել տեղին է կարևորագույն ոլորտներից մեկի՝ առողջապահության առումով: Դա տրամաբանական է, քանի որ առողջապահության ոլորտի աշխատողները գործ ունեն մարդկանց կյանքի և առողջության հետ, հետևաբար, եթե չլինեն բանիմաց և պրոֆեսիոնալ աշխատակիցներ, ապա նույնիսկ բժշկական կենտրոնի նյութատեխնիկական պատշաճ հենքը և գերազանց կահավորումը չեն կարող հանդիսանալ հաջող գործունեության գրավական: Նոր ծառայությունների բացման, ինչպես նաև մասնագետների սերնդափոխության սահունության ապահովման նպատակով ներդրումային ծրագրի շրջանակներում իրականացվել է երիտասարդ կադրերի կրթման և պատրաստման հետևողական աշխատանքներ՝ ժամանակակից պահանջներին համապատասխան:

1.2 2014-2018 թթվականներին «Գրիգոր Նարեկացի» ԲԿ ՓԲԸ-ում ներդրումային ծրագրի արդյունքները

«Մաքս Մեդ» ՍՊԸ-ի կողմից բժշկական կենտրոնում իրականացված ներդրումային ծրագրի արդյունքում՝

1. Բուժհաստատությունը դարձել է բազմապրոֆիլ բժշկական կենտրոն,
2. Բժշկական կենտրոնը կազմում գործող ծծնդատունը II-րդ մակարդակի դարձել է III-րդ մակարդակի ծննդատուն,

3. Բացվել են նոր բաժանմունքներ /վիրաբուժական, դիմածնոտային, քիթ-կոկորդ-ականջաբանական, մանկաբուժական, ակնաբուժական/,

4. Ստեղծվել է 57 նոր աշխատատեղ,

5. Ընդլայնվել է մատուցվող բժշկական ծառայությունների ցանկը և ծավալը,

6. Արտահիվանդանոցային ծառայությունում բացվել է մանկաբուժական բաժին՝ սպասարկման տարածքի 0-18 տարեկան երեխաներին արտահիվանդանոցային թերապևտիկ և նեղ մասնագիտական բուժօգնություն և սպասարկում տրամադրելու նպատակով,

7. Բժշկական կենտրոնը հագեցվել է ժամանակակից պահանջներին համապատասխանող նոր բժշկական սարքավորումներով,

8. Աճել են կենտրոնի կողմից վճարովի հիմուքներով մատուցվող ծառայություններից ստացված մուտքերը /Աղյուսակ 2/,

9. Աճել են պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում մատուցվող ծառայություններից ստացված մուտքերը /Աղյուսակ 2/,

10. Ավելացնել են բժշկական կենտրոն հաճախումների թվի /Աղյուսակ 2/,

11. Ընկերությունը ինչպես տարածաշրջանում, այնպես էլ Երևան քաղաքում դարձել է մրցունակ բազմապրոֆիլ բժշկական կենտրոնը:

Աղյուսակ 1

ՄԱՏՈՒՑՎԱԾ ԲԺՇԿԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾԱՎԱԼ

Հազար դրամ

h/h	Անվանում	2013թ.		2014թ.		2015թ.		2016թ.		2017թ.		2018թ.	
		հիվանդների քանակ	եկամուտ	հիվանդների քանակ	եկամուտ	հիվանդների քանակ	եկամուտ	հիվանդների քանակ	եկամուտ	հիվանդների քանակ	եկամուտ	հիվանդների քանակ	եկամուտ
1	**Պետական պատվերի շրջանակներում հիվանդանոցային բժշկական օգնություն այդ թվում**	**1353**	**135012.1**	**1466**	**150846.3**	**2411**	**259388.1**	**2741**	**315162.3**	**2594**	**292651.7**	**2905**	**316408.7**
1.1	*Մանկաբուժություն*	1241	126,573.3	1237	122,342.8	1299	112,269.8	1089	122,038.0	971	105,685.0	915	107,263.0
1.2	*Գինեկոլոգիական ծառայություն*	77	5,193.4	97	7,031.6	82	5,586.5	77	7,943.0	79	7,166.0	120	7,724.0
1.3	*Վիրաբուժական ծառայություն*	1	105.5	83	16,722.0	99	19,749.5	75	13,591.0	97	14,541.0	257	24,294.0
1.4	*Մանկաբուժական ծառայություն*	34	3,139.9	49	4,750.0	931	121,782.4	1500	171,590.0	1447	165,260.0	1613	177,128.0
2	**Հիվանդանոցային վճարովի բժշկական օգնություն այդ թվում**	**220**	**48518**	**274**	**62582**	**230**	**52828**	**250**	**67887**	**338**	**83655**	**414**	**103732**
2.1	*Գինեկոլոգիական ծառայություն*	133	26,675.0	130	26,380.0	100	20,243.0	89	21,560.0	92	22,123.0	99	24,734.0
2.2	*Վիրաբուժական ծառայություններ*	87	21,843.0	144	36,202.0	130	32,585.0	161	46,327.0	246	61,532.0	315	78,998.0
3	**Պետական պատվերի շրջանակներում արտահիվանդանոցային բժշկական ծառայություն**	x	48,971.0	x	51,801.0	x	87,177.0	x	91,101.0	x	90,496.0	x	94,174.0
4	**Վճարովի արտահիվանդանոցային բժշկական ծառայություն**	x	2,715.0	x	5,215.0	x	5,016.0	x	9,106.0	x	12,443.0	x	29,143.0
5	**Վճարովի Լաբորատոր ախտորոշիչ հետազոտություններ**	x	1,573.0	x	3,326.0	x	7,536.0	x	4,741.0	x	4,305.0	x	9,188.0
6	**Այլ վճարներ**	x	4,086.0	x	3,782.0	x	4,728.0	x	4,863.0	x	3,796.0	x	4,737.0
	ԸՆԴԱՄԵՆԸ	**1573**	**240,875.0**	**1740**	**277,552.0**	**2641**	**416,673.0**	**2991**	**492,861.0**	**2932**	**487,347.0**	**3319**	**557,382.0**

Ինչպես երևում է աղյուսակից՝ կատարված ներդրումների նպաստել են ոչ միայն հիվանդանոցային ծառայությունների, այլ նաև արտահիվանդանոցային ծառայությունների զարգացմանը, մատուցվող ծառայությունների որակի բարձրացմանը, ծավալների ավելացմանը, ինչի հավաստիքն է բուժհաստատություն կատարված այցերի ավելացումը /Գծապատկեր1/:

Գծապատկեր 1



Ծրագիրը իր հերթին նպաստեց նաև ինչպես պետության կողմից երաշխավորված բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում մատուցվող ծառայություններից ստացված եկամուտների ավելացմանը /Գծապատկեր 2/ հիմունքերով մատուցվող բժշկական ծառայությունների ստացվող եկամուտների ավելացմանը, այնպես էլ վճարովի հիմունքերով մատուցվող ծառայություններից ստացված մուտքերի ավելացմանը /գծապատկեր 3/:

Վիրաբուժական ծառայությունների ընդլանումը, ծավալների ավելացումը և մանկաբուժական ծառայության ներդրումը արդարացվեցին, ինչի հավաստիքն է Աղյուսակ 1-ում ներկայացված ցուցանիշները:

Գծապատկեր 2



Գծապատկեր 3



Աղյուսակ 2

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

	2014	2015	2016	2017	2018	Ընդամենը
Ընդամենը եկամուտ, հազ. ՀՀ դրամ						
Պետական պատվերի շրջանակներում հիվանդանոցային բժշկական օգնություն այդ թվում	**150,846**	**259,388**	**315,162**	**292,652**	**316,409**	**1,334,457**
Ծննդօգնություն	122,343	112,270	122,038	105,685	107,263	**569,599**
Գինեկոլոգիական ծառայություն	7,032	5,587	7,943	7,166	7,724	**35,451**
Վիրաբուժական ծառայություններ	16,722	19,749	13,591	14,541	24,294	**88,897**
Մանկաբուժական ծառայություն	4,750	121,782	171,590	165,260	177,128	**640,510**
Հիվանդանոցային վճարովի բժշկական օգնություն այդ թվում	**62,582**	**52,828**	**67,887**	**83,655**	**103,732**	**370,684**
Գինեկոլոգիական ծառայություն	26,380	20,243	17,560	19,123	24,734	**108,040**
Վիրաբուժական ծառայություններ	36,202	32,585	50,327	64,532	78,998	**262,644**
Պետական պատվերի շրջանակներում արտահիվանդանոցային բժշկական ծառայություն	**51,801**	**87,177**	**91,101**	**90,496**	**94,174**	**414,749**
Վճարովի արտահիվանդանոցային բժշկական ծառայություն	**5215**	**5016**	**9106**	**12443**	**29143**	**60,923**
Վճարովի լաբորատոր ախտորոշիչ հետազոտություններ	**3,326**	**7,536**	**4,741**	**4,305**	**9,188**	**29,096**
Այլ վճարներ	**3,782**	**4,728**	**4,863**	**3,796**	**4,737**	**21,906**
Ընդամենը եկամուտ	**277,552**	**416,673**	**492,861**	**487,347**	**557,382**	**1,817,066**
Ընդամենը ծախսեր, հազ. ՀՀ դրամ						
Աշխատավարձ (անվանական)	215,370	282,477	333,086	334,026	356,066	1,521,025
Դեղորայք և բուժպարագաներ	21,157	28,932	33,357	35,034	39,024	157,504
Տնտեսական և կոմունալ ծախսեր	19,894	24,164	22,378	24,391	34,859	125,686
Ամորտիզացիոն հատկացումներ	12,972	36,650	40,403	36,513	35,000	161,538
Այլ ծախսեր	4,337	19,901	32,144	37,615	37,445	131,442
Ընդամենը ծախսեր	**273,730**	**392,124**	**461,368**	**467,579**	**502,394**	**2,097,195**
Համախառն շահույթ	**3,822**	**24,549**	**31,493**	**19,768**	**54,988**	**134,620**
Շահութահարկ	**1,444**	**4,910**	**6,856**	**5,146**	**10,998**	**26,924**
Զուտ շահույթ	**2,378**	**19,639**	**24,637**	**14,622**	**43,991**	**107,696**

Ներդրումային ծրագրի իրագործման արդյունքում 2014-2018թթ. բժշկական կենտրոնի միջին տարեկան համախառն շահույթը կազմել է՝ 26,924.0 հազար ՀՀ դրամ, կամ կամ գումարային 5 տարիների ընթացքում՝ 134,620.0 հազար ՀՀ դրամ:

Գծապատկեր 4-ում պատկերված է ներդրումային ծրագրի իրագործումից ընկերության շահութաբերության աճի դինամիկան:

Գծապատկեր 4



Ծրագրի իրագործման 5 տարիների ընթացքում բժշկական կենտրոնի զուտ շահույթը կազմել է 107,696.0 հազար ՀՀ դրամ, որից հիմնադրի և կառավարչի մասհանումների մեծությունը և ժամանակացույցը բերվում է Աղյուսակ 3-ում:

Աղյուսակ 3

ՇԱՀՈՒՅԹԻ ԲԱՇԽՈՒՄ

Հազար դրամ

Տարեթիվ	2014	2015	2016	2017	2018	Ընդամենը
Զուտ շահույթ	2,378	19,639	24,637	14,622	43,991	105,266
Մասհանում հիմնադրին	476	3,928	4,927	2,924	8,798	21,053
Մասհանում հավատարմագրային կառավարչին	1,902	15,711	19,709	11,698	35,192	84,213

2. ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Վերլուծելով բժշկական ծառայությունների շուկայի իրավիճակը գալիս ենք այն եզրահանգման, որ ՀՀ մատուցվող բժշկական ծառայությունների որակը բարձրանում է առավելապես ի հաշիվ մասնավոր հաստատությունների, որոնք արձանագրում են զարգացման դրական միտում: Ներկայումս պետական առողջապահական հաստատություններն անկում են ապրում, ինչը հիմնականում պայմանավորված է ծառայությունների մատուցման տվյալ շուկայում դանդաղ կողմնորոշման՝ սպառողների պահանջմունքներին դանդաղ արձագանքման, ֆինանսավորման պակասով և կառավարման անարդյունավետությամբ:

Տվյալ միտումը պայմանավորված է նաև ժամանակակից կյանքի տեմպերի արագացմամբ: Ժամանակակից հասարակությունը ձգտում է ստանալ առավելագույն քանակի բարձրորակ ծառայություններ տնտեսելով ժամանակը:

Առողջապահական հաստատությունների կառուցման և ազգաբնակչությանը բժշկական ծառայությունների մատուցման ներկայիս վիճակով պայմանավորված տարեցտարի մեծանում է մասնավոր (սեփական) բժշկական հաստատությունների թիվը հանրապետությունում:

Միևնույն ժամանակ սպառողներն իրենց ծախսերում դարձել են առավել հաշվենկատ՝ բացատրելով դա դրամական միջոցների պակասով:

«Գրիգոր Նարեկացի» ԲԿ ՓԲԸ-ն լինելով բազմապրոֆիլ բժշկական կենտրոն, ներկայումս կարողանում է մրցակցել ծառայությունների մատուցման տվյալ շուկայում այլ բազմապրոֆիլ բժշկական կազմակերպությունների հետ՝ բուժսպասարկման ոլորտում զբաղեցնելով իր ուրույն տեղը: Ուստի՝ նպատակ ունենալով ներկա մրցակցային պայմաններում /տարածաշրջանում գործում է 3 բազմպրաֆիլ բժշկական կենտրոն/ պահպանել բժշկանական կենտրոնի զարգացման ներկա մակարդակը, ապահովել բժշկական կենտրոնի բնականոն և մասնագիտացված գործունեությունը՝ ի շահ ազգաբնակչության, պետության և մասնավոր հատվածի, ինչպես նաև կայուն զարգացման շարունակականությունը, միաժամանակ հաշվի առնելով բժշկական կենտրոնում հավատարմագրային կառավարման ինստիտուտի կիրառման բարձր արդյունավետությունը՝ առաջարկվում է 2019 թվականից երկարաձգել Երևան քաղաքային համայնքի և «Մաքս Մեդ» ՍՊԸ-ի միջև 2014 թվականի հունիսի 9-ին կնքվել է «Բաժնետոմսերով հավաստված իրավունքների հավատարմագրային կառավարման» պայմանագիր (այսուհետ՝ Պայմանագիր) հավատարմագրային կառավարման պայմանագիրը 15 տարի ժամկետով, որի ընթացքում հավատարմագրային կառավարիչ կազմակերպությունը պարտավորվում է կատարել լրացուցիչ ***<u>350,000.0 հազար (երեք</u>***

<u>հարյուր հիսուն միլոն) ՀՀ դրամի</u> ներդրումներ /2014-2018թթ. կարարվել է 300,150.0 (երեք հարյուր միլիոն հարյուր հիսուն հազար) հազար դրամի ներդրում/:

<u>Նոր ներդրումային ծրագրի իրականացումը ենթադրում է.</u>

- Ճիշտ և նպատակային կառավարման շարունակականության ապահովում,
- Բժշկական կենտրոնի տեխնիկական հագեցման շարունակականության ապահովում, նոր բուժսարքավորումների ձեռքբերում,
- Բուժանձնակազմի վերապատրաստում,
- Շուկայի պահանջարկին համապատասխանող նոր ծառայությունների ներդրում,
- 30 նոր աշխատատեղերի ստեղծում՝ առաջատար մասնագետների ներգրավմամբ,
- Մրցակցային պայմանների ապահովում՝ պահպանելով մրցունակ բազմապրոֆիլ բժշկական կենտրոնի դերը տարածաշրջանում,
- Մոր և մանկական ժամանակակից կենտրոնի ստեղծում,
- Շենքային պայմանների բարելավման շարունակականության ապահովում:

<u>Ծրագրի իրագործման խնդիրներն են.</u>

- Ընկերության կանոնադրությամբ սահմանված իրավասությունների շրջանակներում բնակչությանը որակյալ բժշկական ծառայությունների մատուցման շարունակականության ապահովում՝ նպատակային կառավարում և մասնագիտական բժշկական ծառայությունների համար սահմանված չափորոշիչների պահանջները կատարելու միջոցով:
- Պետական պատվերի ծառայություններին զուգահեռ բարձրակարգ նեղ մասնագետների ներգրավմամբ վճարովի ծառայությունների ծավալի ավելացման շարունակականության ապահովում:
- Ժամանակակից պահանջներին համապատասխանող սարքավորումների և նոր մեթոդների ներդրմամբ՝ լաբորատոր-ախտորոշիչ գործիքային նոր հետազոտությունների իրականացում, ծավալների ավելացում:
- Բոլոր անհրաժեշտ բուժսարքավորումներով և պարագաներով ապահովված մի շարք նոր ծառայությունների ստեղծում, ինչը կնպաստի բարձրորակ բուժօգնության մատուցմանը:

3. ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

3.1 Ներդրումային ծրագրի ուղղությունները

«Գրիգոր Նարեկացի» ԲԿ ՓԲԸ-ի ներդրումային ծրագրի իրականացվելու է 3 հիմնական ուղղություններով.

1. *Վերանորոգման և հիմնանորոգման աշխատանքների իրականացում՝*

Գործունեության արդյունավետության բարձրացման նպատակով նախատեսվում է կենտրոնի ծառայությունների մատուցմանը զուգահեռ շարունակել փուլային իրականացնել *110.0 մլն ՀՀ դրամ* ընդհանուր արժեքով շինմոնտաժային աշխատանքներ, ինչը հնարավոր կդարձնի ազգաբնակչությանը մատուցվող ծառայությունների շարունակական ապահովումը։

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է իրականացնել.

- ✓ Վիրահատական բաժանմունք վրահատական սրահների վերանորոգում,
- ✓ Լաբորատոր կենտրոնի վերանորոգում՝ այլ տարածք տեղափոխման նպատակով,
- ✓ Մանկաբուժական բաժանմունքի վերանորոգում՝ ընդլայնման նպատակով,
- ✓ Դեղատան, տնտեսական և հաշվապահական հաշվառման բաժնի վերանորոգում,
- ✓ Տանիքների ամբողջական հիմնանորոգում նոր ժամանակակից մետաղյա թիթեղներով /տանիքը ամբողջությամբ գտնվում է ոչ բարվոք վիճակում/,
- ✓ Բակային տարածքի բարեկարգում, արտեզյան հորատանցքի բացում՝ ոռոգման ջրի մատակարարում ապահովելու նպատակով,
- ✓ Աստիճանավանդակի վերանորոգում,
- ✓ Մանկական վերակենդանացման բաժանմունքի վերանորոգում,
- ✓ Այլ անհրաժեշտ աշխատանքների իրականացում /ներառյալ վերելակի փոխարինում նորով/։

2. *Նյութատեխնիկական բազայի հզորացում.*

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է ձեռք բերել ժամանակակից նոր բժշկական սարքավորումներ, լաբորատոր և ախտորոշիչ գործիքներ, վերազինել վիրատական բաժանմունքի վիրահատական սրահները, մանկաբարձական և մանկական վերակենդանացման բաժանմունքները։ Նոր սարքավորումների ձեռքբերումը հնարավորություն կտա մեծացնել հիվանդությունների ճիշտ ախտորոշման տոկոսը, բարձրացնել բուժման ինտենսիվությունը և մակարդակը, նվազեցնել բուժման տևողությունը, որի արդյունքում կնվազի բուժման ինքնարժեքը։

Հաշվի առնելով բժշկական կենտրոնի մասնագիտացումը և բժշկական ծառայությունների մատուցման շուկայի ուսումնասիրության արդյունքները նախատեսվում է ձեռքբերել *200.0 մլն ՀՀ դրամ* ընդհանուր արժեքով բժշկական սարքավորումներ և պարագաներ /ներդրումային ծրագրի շրջանակներում ձեռք բերվող սարքավորումները ցանկը և ժամանակացույցը կվորոշվի ժամանակի թելադրանքից և ներդրվող նոր ծառայությունների առաջնահերթությունից ելնելով/։

Բացի նոր բժշկական սարքավորումներից նախատեսվում է ձեռքբերել նաև *20.0 մլն ՀՀ դրամ* ընդհանուր արժեքի կոշտ գույք՝ կահույք, պահարաններ, մահճակալներ, աթոռներ, բազկաթոռներ, դարակներ, ինչպես նաև հաճախորդների պատշաճ ընդունման համար

նախատեսված այլ կահավորանք /ելնելով անհրաժեշտությունից/։

3. ***Կադրերի վերապատրաստում.***

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է իրականացնել նաև բուժաշխատողների անընդհատ վերապատրաստման ծրագիր՝ համագործակցելով հայաստանյան առաջատար համալսարանների և բուժհաստատությունների հետ: «Մաքս Մեդ» ՍՊԸ-ի ղեկավարությունը կարևորում է բժշկական ծառայությունների մատուցման և պրոֆեսիոնալ սպասարկման հարցը, ինչը հանդիսանում է գործունեության արդյունավետության բարձրացման կարևոր բաղադրիչներից մեկը։ Այդ իսկ պատճառով «Կադրերի կրթում և վերապատրաստում» հոդվածով ներդրումների իրականացման 10 տարիների ընթացքում նախատեսված է *10.0մլն ՀՀ դրամ՝* տարեկան միջինում 5 բուժաշխատողի վերապատրաստման և որակավորման բարձրացման նպատակով։

Եվս *10.0 մլն ՀՀ դրամ* նախատեսված է «Այլ ծախսեր» հոդվածով՝ ծրագրով նախատեսված ծախսային հոդվածներից դուրս այլ անհրաժեշտ ծախսերի, այդ թվում նաև գովազդի գծով ծախսերի կատարման նպատակով։

Ներդրումային ծրագրի շրջանակներում աշխատանքները կիրականացվեն 2020 թվականից սկսած 10 տարիների ընթացքում։ Ներդրումների ժամանակացույցը ներկայացված է Աղյուսակ 2-ում։

3.2 Ակնկալվող արդյունքեր

Ծրագրի իրականացման արդյունքում ամբողջությամբ կբարելավվի բժշկական կենտրոնի շենքային պայմանները, կհագեցվի նյութատեխնիկական բազան, ինչը որակյալ բուժսպասարկմանը զուգընթաց, հնարավորություն կտա նաև բացել ***նոր բժշկական ծառայություններ,*** մասնավորապես՝

- ✓ Բժշկական կենտրոնը մեծ պոտենցիալ է տեսնում վիրաբուժության բնագավառում /ինչի հավաստիքն է բաժանմունքի գրանցած ցուցանիշները 2013-2018թթ. ընթացքում/, այդ իսկ պատճառով նախատեսում է ստեղծել *էնդոսկոպիկ վիրաբուժության բաժանմունք*, որը համարվում է նորագույն տեխնոլոգիաների կիրառմամբ բժշկական միջամտություն, քիչ տրավմատիկ է և հետևաբար ունի մեծ պահանջարկ։
- ✓ Չնայած բժշկական օգնության մակարդակի էական բարձրացմանը, բնակչության հիվանդացության մակարդակը շարունակում է աճել։ Ընդհանուր հիվանդացության մեջ աճել է նաև տեխնածին վթարների, ավտովթարների արդյունքում և այլ պատճառներով ստացվող վնասվածքներով հիվանդների թիվը։ Այդ պատճառով նախատեսվում է կենտրոնում ստեղծել *վնասվածքաբանության բաժանմունք*:
- ✓ *Մոր և մանկան առողջության ժամանակակից կենտրոնի ստեղծում*: Հաշվի առնելով, որ բժշկական կենտրոնի կազմում գործում է ծննդատուն, ուստի՝ մատուցվող բժշկական ծառայությունների որակի, ինչպես նաև արդյունավետության բարձրացման նպատակով անհրաժեշտություն է առաջացել ընդլայնել *մանկաբուժական բաժանմունքը և նորածնային բժշկական ծառայությունը, ինչպես նաև ստեղծել մանկական վերակենդանացման բաժանմունք՝* տեղում նորածիններին անհրաժեշտ բժշկական

օգնությունը և սպասարկումը կազմակերպելու նպատակով: Մանկական վերակենդանացման բաժանմունքի ստեղծման առաջին և հիմնական նախապայմանը Հայաստանում նշված ծառայության համար նախատեսված մահճակալների սահմանափակ լինելն է՝ մեծ պահանջարկի պայմաններում: Նախատեսվում է վերակենդանացման բաժանմունքում ստեղծել 10 մահճակալ: Համաձայն վիճակագրական տվյալների 2017 թվականին հիվանդ ծնված և հիվանդացած նորածինների թիվը 1000 հասուն ծնվածների նկատմամաբ կազմել է 89.1, իսկ 1000 անհաս ծնվածների նկատմամբ՝ 722.3 /բոլոր հիվանդությունների մասով/: Միայն նորածինների մասով դիտարկելով ցուցանիշների աճը /դիտարկվող ժամանակահատված՝ 2000-2017թթ./՝ կարող ենք համարձակորեն պնդել, որ ներդրվող ծառայությունը անհրաժեշտ է և կարևոր:

- ✓ Ախտորոշման մակարդակի ճշգտրության աստիճանի բարձրացմանը նպատակով ընդլայնվելու է լաբորատոր-ախտորոշիչ բաժանմունքում իրականացվող ծառայությունների ցանկը:
- ✓ Ակնաբուժական ծառայության զարգացման շարունակականության ապահովման և ընդլայնման նպատակով աչքի կլինիկան վերազինվելու և հագեցվելու է ժամանակակից պահանջներին համապատասխանող բժշկական սարքավորումներով:

Նախատեսվող միջոցառումների իրականացումը կնպաստի ընկերության մատուցվող բժշկական ծառայությունների ընդլայնմանը, ցանկի մեծացմանը, որակի էլ ավելի բարձրացմանը, ինչն էլ իր հերթին կնպաստի շահութաբերության ապահովմանը, արդյունավետ և ճիշտ գնային քաղաքականության կիրառումը իր հերթին կնպաստի հաճախորդների հոսքի ավելացմանը, ինչն էլ կապահովի շահույթի շարունակական /կայուն/ աճ:

Այսպիսով «Գրիգոր Նարեկացի» ԲԿ ՓԲԸ-ի վերանորոգման, վերազինման և արդյունավետ կառավարման ներդրումային ծրագրի շրջանակներում «Մաքս Մեդ» ՍՊԸ-ի կողմից 2020 թվականից սկսած 10 տարիների ընթացքում նախատեսվում է կատարել ***<u>350,0 մլն (երեք հարյուր հիսուն միլոն) ՀՀ դրամի</u>*** ուղղակի ներդրում (Աղյուսակ 4):

4. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

4.1 <u>Ֆինանսական ծրագրի կազմման ելակետային տվյալները</u>

Նախագծի ֆինանսական ծրագրի մոդելավորման համար ելակետային են հանդիսացել հետևյալ տվյալները.

1. Նախագծի մոդելավորման ժամանակային պարամետրերը
   - պլանավորման միջակայքը-1 տարի,
   - պլանավորման միջակայքի տևողությունը-365 օր,
   - պլանավորման հորիզոնը-15 տարի,
   - գործառնական գործունեության սկիզբը-2019 թվական
   - ներդրումային փուլի տևողությունը-6 տարի,
   - գործառնական փուլի տևողությունը-15 տարի:

2.Մակրոտնտեսական միջավայր.

- նախագծի հիմնական հաշվարկային միավորը-ՀՀ դրամ,
- դրամական միավորի կարգը-ՀՀ հազար (մլն.) դրամ,
- նախագծի հաշվարկման մեթոդը-հաշվարկը հաստատուն գներով:

Այս մեթոդը հանդիսանում է ներդրումային նախագծերի մշակման և ներդրումների արդյունավետության վերլուծության ժամանակ առավել հաճախ կիրառվողը: Այս մեթոդի կիրառման ժամանակ դրամական միավորի գնողունակությունը ֆիքսվում է, որպես կանոն պլանավորման սկզբի դրությամբ: Արդյունքում ժամանակային տարբեր միջակայքերին վերաբերող արժեքային բոլոր ցուցանիշները (գներ, դրամական հոսքեր և այլ) ներկայացվում են համադրելի չափողականությամբ:

4.2 Ֆինանսավորման արտաքին աղբյուրները

Ֆինանսական ծրագիրը հիմնված է այն ենթադրության վրա, որ «Մաքս Մեդ» ՍՊԸ-ի հետ 2019 թվականից կերկարաձգվի «Գրիգոր Նարեկացի» բժշկական կենտրոնի Հավատարմագրային կառավարման պայմանագիրը 15 տարի ժամկետով, համաձայն որի հավատարմագրային կառավարիչը 2020 թվականից սկսած ծրագրի 10 տարիների ընթացքում կախահովի ***350.0 մլն ՀՀ դրամ*** ներդրումների իրականացումը բժշկական կենտրոնի վերանորոգման, տեխնիկական վերազինման, կադրերի վերապատրաստման և որակավորման բարձրացման համար, որոնք ըստ ծախսման ուղղությունների բերված են Աղյուսակ 4-ում: Ներդրումների ժամանակացույցը ներկայացված է Աղյուսակ 5-ում:

Աղյուսակ 4

ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ՆԱԽԱՀԱՇԻՎ

Հազար դրամ

N	Կատարվող աշխատանքների անվանումը	Ընդամենը գումար
1	Շենքերի և շինությունների վերանորոգման աշխատանքներ	110,000.00
2	Նոր բժշկական սարքավորումներ	200,000.00
3	Կոշտ գույքի ձեռքբերում	20,000.00
4	Կադրերի կրթում և վերապատրաստում	10,000.00
5	Այլ ծախսեր	10,000.00
	Ընդամենը	**350,000.00**

Աղյուսակ 5

ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հազար դրամ

N	Կատարվող աշխատանքների անվանումը	2020թ.	2021թ.	2022թ.	2023թ.	2024թ.	2025թ.	2026թ.	2027թ.	2028թ.	2029թ.	Ընդամենը
1	Շենքերի և շինությունների վերանորոգման աշխատանքներ	11,000.0	11,000.0	11,000.0	11,000.0	11,000.0	11,000.0	11,000.0	11,000.0	11,000.0	11,000.0	**110,000.0**
2	Նոր բժշկական սարքավորումների ձեռքբերում	35,000.0	35,000.0	16,250.0	16,250.0	16,250.0	16,250.0	16,250.0	16,250.0	16,250.0	16,250.0	**200,000.0**
3	Կոշտ գույքի ձեռքբերում	4,000.0		2,000.0	2,000.0	2,000.0	2,000.0	2,000.0	2,000.0	2,000.0	2,000.0	**20,000.0**
4	Կարդրերի կրթում և վերապատրաստում	2,000.0		1,000.0	1,000.0	1,000.0	1,000.0	1,000.0	1,000.0	1,000.0	1,000.0	**10,000.0**
5	Այլ ծախսեր	2,000.0		1,000.0	1,000.0	1,000.0	1,000.0	1,000.0	1,000.0	1,000.0	1,000.0	**10,000.0**
	Ընդանուր	**54,000.0**	**46,000.0**	**31,250.0**	**31,250.0**	**31,250.0**	**31,250.0**	**31,250.0**	**31,250.0**	**31,250.0**	**31,250.0**	**350,000.0**

4.3 «Գրիգոր Նարեկացի» բժշկական կենտրոնի եկամուտների և ծախսերի կանխատեսում

Բժշկական կենտրոնի եկամուտների կանխատեսվող կառուցվածքը հիմնված է.

- բժշկական կենտրոնի 2014-2018թթ. ֆինանսական փաստացի ցուցանիշների վրա,
- բժշկական ծառայությունների մատուցման ընդհանուր շուկայի վերլուծության վրա,
- բժշկական ծառայություններ սպառողների պահանջարկի վերլուծության վրա,
- բժշկական ծառայությունների շուկայի զարգացման միտումների և ընդհանուր եզրակացությունների հիման վրա։

Բժշկական կենտրոնի ծառայությունների մատուցման ինքնարժեքը կազմող ծախսային հոդվածներն են.

1. Աշխատանքի վարձատրությանն ուղղված միջոցներ

Աշխատանքի վարձատրությանն ուղղված միջոցներն ըստ ՀՀ առողջապահության նախարարության կողմից սահմանված կողմնորոշիչ նորմատիվների պետք է կազմի 50-60%։ Բացի այդ կարող են նախատեսվել հավելավճարներ՝ վճարովի բուժծառայությունների մատուցումից։

2. Դեղորայքի և բուժպարագաների ձեռքբերման ծախսեր

Այս հոդվածով ծախսերի հաշվարկման համար հիմք են ընդունվել սույն միջոցներով և բուժպարագաներով մեկ հաճախորդի սպասարկման համընդհանուր նորմատիվները և բժշկական կենտրոնի փաստացի ցուցանիշները։

3. Բուժսարքավորումների ամորտիզացիոն հատկացումներ

՝Ամորտիզացիոն հատկացումներ՝ հոդվածով նախատեսվում է ապահովել հիմնական բուժսարքավորումների և այլ հիմնական միջոցների լրիվ վերարտադրման անխափան գործընթացը։ Ամորտիզացիայի հաշվարկներն իրականացվել են ծրագրի շրջանակներում ձեռքբերվող սարքավորումների, կահավորանքի համար։

4. Տնտեսական և կոմունալ ծախսեր

Բժշական կենտրոնի տնտեսական և կոմունալ ծախսերը ձևավորվում են էլեկտրաէներգիայի, գազի, ջրի և կապի միջոցների, տնտեսական պարագաների, տարածքի պահպանման, աղբահանության, մաքրման աշխատանքների գումարային ծախսերից։

5. Այլ ծախսեր

Այլ ծախսեր հոդվածով նախատեսված են բժշկական կենտրոնի ծառայությունների մատուցման ժամանակ առաջ եկող այլ ծախսերը, ինչպես նաև չնախատեսված ծախսերը, կենտրոնի գործունեության լուսաբանման և գովազդման ծախսերը։

Ներդրումային ծրագրի իրագործումից հասույթը ձևավորման հիմնական աղբյուր են հանդիսանալու՝

1. Պետության կողմից երաշխավորված անվճար հիվանդանոցային և արտահիվանդանոցային բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում մատուցվող ծառայությունների դիմաց ստացվող եկամուտներ,
2. Վճարովի հիմունքներով մատուցվող հիվանդանոցային և արտահիվանդանոցային բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների դիմաց ստացվող եկամուտներ,
3. Վճարովի լաբորատոր ախտորոշիչ հետազոտությունների իրականացումից ստացվող եկամուտներ,
4. Այլ գործունեությունից ստացվող եկամուտներ։

Ընդհանուր առմամբ բժշկական ծառայությունների մատուցումից ակնկալվող հասույթի հիմքում դրվել է բժշկական կենտրոնի ներկայիս գործունեության ֆինանսական արդյունքները, շուկայի զարգացման կանխատեսումները, ծառայությունների սպառման ակնկալվող ծավալը և այլն։

Աղյուսակ 6

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ

Հազար դրամ

	2019	2020	2021	2022	2023	2024	2025
ԵԿԱՄՈՒՏՆԵՐ, ԱՅԴ ԹՎՈՒՄ							
Պետական պատվերի շրջանակներում հիվանդանոցային բժշկական օգնություն այդ թվում	**309,305**	**310,851**	**312,405**	**313,967**	**315,537**	**317,115**	**318,700**
Ծննդօգնություն	105,823	106,352	106,883	107,418	107,955	108,495	109,037
Գինեկոլոգիական ծառայություն	7,724	7,762	7,801	7,840	7,879	7,919	7,958
Վիրաբուժական ծառայություններ	27,487	27,625	27,763	27,901	28,041	28,181	28,322
Մանկաբուժական ծառայություն	168,271	169,113	169,958	170,808	171,662	172,520	173,383
Հիվանդանոցային վճարովի բժշկական օգնություն այդ թվում	**104,251**	**104,772**	**105,296**	**105,822**	**106,351**	**106,883**	**107,418**
Գինեկոլոգիական ծառայություն	24,858	24,982	25,107	25,232	25,359	25,485	25,613
Վիրաբուժական ծառայություններ	79,393	79,790	80,189	80,590	80,993	81,398	81,805
Պետական պատվերի շրջանակներում արտահիվանդանոցային բժշկական ծառայություն	**103,614**	**105,686**	**107,800**	**109,956**	**112,155**	**114,398**	**116,686**
Վճարովի արտահիվանդանոցային բժշկական ծառայություն	**29288.7**	**29435.16**	**29582**	**29730**	**29879**	**30028.29**	**30178.4**
Վճարովի լաբորատոր ախտորոշիչ հետազոտություններ	**9233.94**	**9280.11**	**9326.5**	**9373.1**	**9420**	**9467.109**	**9514.44**
Այլ վճարներ	**4760.69**	**4784.488**	**4808.4**	**4832.5**	**4856.6**	**4880.898**	**4905.3**
ԸՆԴԱՄՆԵԸ ԵԿԱՄՈՒՏ	**560,453**	**564,809**	**569,218**	**573,681**	**578,199**	**582,772**	**587,402**
ԾԱԽՍԵՐ, ԱՅԴ ԹՎՈՒՄ							
Աշխատավարձ (անվանական)	375,503	378,422	375,684	378,630	381,611	378,802	381,812
Դեղորայք և բուժպարագաներ	39,819	39,544	40,984	41,305	41,630	41,960	42,293
Տնտեսական և կոմունալ ծախսեր	35,309	35,583	39,845	40,158	40,474	40,794	41,118
Ամորտիզացիոն հատկացումներ	39,723	40,032	40,345	40,661	40,981	41,305	41,634
Այլ ծախսեր	33,627	33,889	34,153	34,421	34,692	34,966	35,244
Ընդամենը ծախսեր	**523,982**	**527,470**	**531,011**	**535,174**	**539,389**	**537,828**	**542,100**
Համախառն շահույթ	**36,471**	**37,339**	**38,207**	**38,507**	**38,810**	**44,945**	**45,302**
Շահութահարկ	**7,294**	**7,468**	**7,641**	**7,701**	**7,762**	**8,989**	**9,060**
Զուտ շահույթ	**29,177**	**29,871**	**30,566**	**30,806**	**31,048**	**35,956**	**36,242**

Աղյուսակ 6-ի շարունակություն

	2026	2027	2028	2029	2030	2031	2032	2033
ԵԿԱՄՈՒՏՆԵՐ, ԱՅԴ ԹՎՈՒՄ								
Պետական պատվերի շրջանակներում հիվանդանոցային բժշկական օգնություն այդ թվում	**320,294**	**321,895**	**323,505**	**325,122**	**326,748**	**328,382**	**330,024**	**331,674**
Մինչոգնություն	109,582	110,130	110,681	111,234	111,791	112,350	112,911	113,476
Գինեկոլոգիական ծառայություն	7,998	8,038	8,078	8,118	8,159	8,200	8,241	8,282
Վիրաբուժական ծառայություններ	28,464	28,606	28,749	28,893	29,037	29,182	29,328	29,475
Մանկաբուժական ծառայություն	174,250	175,121	175,997	176,877	177,761	178,650	179,543	180,441
Հիվանդանոցային վճարովի բժշկական օգնություն այդ թվում	**107,955**	**108,494**	**109,037**	**109,582**	**110,130**	**110,681**	**111,234**	**111,790**
Գինեկոլոգիական ծառայություն	25,741	25,870	25,999	26,129	26,260	26,391	26,523	26,655
Վիրաբուժական ծառայություններ	82,214	82,625	83,038	83,453	83,870	84,290	84,711	85,135
Պետական պատվերի շրջանակներում արտահիվանդանոցային բժշկական ծառայություն	**119,020**	**121,400**	**123,828**	**126,305**	**128,831**	**131,408**	**134,036**	**136,716**
Վճարովի արտահիվանդանոցային բժշկական ծառայություն	**30329.3**	**30481**	**30633**	**30786.5**	**30940**	**31095**	**31251**	**31407**
Վճարովի լաբորատոր ախտորոշիչ հետազոտություններ	**9562.02**	**9609.8**	**9657.9**	**9706.16**	**9754.7**	**9803.5**	**9852.5**	**9901.7**
Այլ վճարներ	**4929.83**	**4954.5**	**4979.3**	**5004.15**	**5029.2**	**5054.3**	**5079.6**	**5105**
ԸՆԴԱՄՆԵԸ ԵԿԱՄՈՒՏ	**592,090**	**596,835**	**601,641**	**606,506**	**611,433**	**616,423**	**621,476**	**626,594**
ԾԱԽՍԵՐ, ԱՅԴ ԹՎՈՒՄ								
Աշխատավարձ (անվանական)	384,858	387,943	391,066	394,229	397,432	400,675	403,959	407,286
Դեղորայք և բուժպարագաներ	42,630	42,972	43,318	43,668	44,023	44,382	44,746	45,115
Տնտեսական և կոմունալ ծախսեր	41,446	41,778	42,115	42,455	42,800	43,150	43,503	43,862
Ամորտիզացիոն հատկացումներ	41,966	42,302	42,643	42,988	43,337	43,691	44,049	44,049
Այլ ծախսեր	35,525	35,810	36,098	36,390	36,686	36,985	37,289	37,596
Ընդամենը ծախսեր	**546,426**	**550,806**	**555,241**	**559,731**	**564,278**	**568,883**	**573,546**	**577,907**
Համախառն շահույթ	**45,663**	**46,029**	**46,400**	**46,775**	**47,155**	**47,540**	**47,930**	**48,687**
Շահութահարկ	**9,133**	**9,206**	**9,280**	**9,355**	**9,431**	**9,508**	**9,586**	**9,737**
Զուտ շահույթ	**36,531**	**36,824**	**37,120**	**37,420**	**37,724**	**38,032**	**38,344**	**38,950**

Պետական պատվերի շրջանակներում մատուցվող բժշկական օգնության և սպասարկման կանխատեսվող ծավալի հաշվարկման համար հիմք են ընդունվել ՀՀ կառավարության կողմից հաստատված ծրագրով հիվանդանոցային և արտահիվանդանոցային ծառայությունների համար հատկացված ֆինանսական միջոցների դինամիկան, ինչպես նաև տվյալ տարում ներդրվող ծառայության համար պետական պատվերի կանխատեսվող գումարը:

Վճարովի ծառայությունների կանխատեսվող ծավալի հաշվարկման համար հիմք է հանդիսացել բժշկական կենտրոնի կողմից փաստացի արձանագրված ցուցանիշների, ինչպես նաև նոր ներդրվող ծառայությունների կանխատեսվող վճարովի ծառայությունների ծավալը:

Գործունեության այլ տեսակներից ստացվող եկամտի հաշվարկման համար հիմք է ընդունվել փաստացի եկամտի ծավալը, առկա պայմանագրերը, ինչպես նաև կանխատեսվող աճը:

Եկամտային մասով հավատարմագրային կառավարման 15 տարիների ընթացքում նախատեսվում է

- պետական պատվերի շրջանակներում մատուցվող հիվանդանոցային և արտահիվանդանոցային ծառայություններից ստավող եկամուտների կայունության ապահովում՝ աճի միտումով,
- վճարովի հիմուքներով մատուցվող հիվանդանոցային և արտահիվանդանոցային ծառայություններիս ստացվող համախառն եկամուտների կայունության ապահովում՝ աճի միտումով:

Ներդրումային ծրագրի իրագործման արդյունքում բժշկական կենտրոնում ակնկալվող միջին տարեկան համախառն շահույթը կկազմի 43,717.0 հազար դրամ, միջին շահութաբերությունը կկազմի 6.17 % :

Ներդրումային ծրագրի իրագործումից ակնկալվող շահույթի, շահութաբերության ցուցանիշի և այլ ֆինանսական բնութագրիչներ ներկայացված են Աղյուսակ 7-ում և գծանկար 5-ում:

Գծապատկեր 5

ՇԱՀՈՒԹԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԴԻՆԱՄԻԿԱՆ 2019-2033թթ.



Աղյուսակ 7

ՆԱԽԱԳԾԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԻՑ ԱԿՆԿԱԼՎՈՂ ՕԳՈՒՏՆԵՐԸ

Հազար դրամ

Տարեթիվ	2019	2020	2021	2022	2023	2024	2025	2026
Ընդամենը եկամուտ	560,453	564,809	569,218	573,681	578,199	582,772	587,402	592,090
Ընդամենը ծախսեր	523,982	527,470	531,011	535,174	539,389	537,828	542,100	546,426
Համախառն շահույթ	36,471	37,339	38,207	38,507	38,810	44,945	45,302	45,663
Շահութահարկ	7,294	7,468	7,641	7,701	7,762	8,989	9,060	9,133
Զուտ շահույթ	29,177	29,871	30,566	30,806	31,048	35,956	36,242	36,531
Շահութաբերություն	5.21%	5.29%	5.37%	5.37%	5.37%	0	6.17%	6.17%
Դիսկոնտավորման գործակից	1.00	1.10	1.21	1.33	1.46	1.61	1.77	1.95
Դիսկոնտավորված եկամուտ /արժեք, PV/	36,471	33,945	31,576	28,931	26,508	27,907	25,572	23,433

Աղյուսակ 7-ի շարունակություն

Հազար դրամ

Տարեթիվ	2027	2028	2029	2030	2031	2032	2033	Ընդամենը
Ընդամենը եկամուտ	596,835	601,641	606,506	611,433	616,423	621,476	626,594	**8,889,533**
Ընդամենը ծախսեր	550,806	555,241	559,731	564,278	568,883	573,546	577,907	**8,233,772**
Համախառն շահույթ	46,029	46,400	46,775	47,155	47,540	47,930	48,687	**655,761**
Շահութահարկ	9,206	9,280	9,355	9,431	9,508	9,586	9,737	**131,152**
Զուտ շահույթ	36,824	37,120	37,420	37,724	38,032	38,344	38,950	**524,609**
Շահութաբերություն	6.17%	6.17%	6.17%	6.17%	6.17%	6.17%	6.22%	**5.89% /միջ./**
Դիսկոնտավորման գործակից	2.14	2.36	2.59	2.85	3.14	3.45	3.80	**10%**
Դիսկոնտավորված եկամուտ /արժեք, PV/	21,473	19,678	18,034	16,528	15,148	13,884	12,821	**351,907**

Միևնույն ժամանակ ներդրումային ծրագրի կայունության որոշման նպատակով հաշվարկվել է Ընկերության կողմից մատուցվող բժշկական ծառայություններից ակնկալվող եկամուտի դիսկոնտավորված արժեքը /PV/: Հաշվարկներում դիսկոնտավորման դրույքաչափը վերցված է 10%: Հաշվարկները ցույց են տվել, որ ներդրումային ծրագիրը օժտված է կայունության բավարար պաշարով, քանի որ նույնիսկ դիսկոնտավորման 10% կիրառման դեպքում Ընկերության դիսկոնտավորված եկամուտը կկազմի **351,907.0** հազար ՀՀ դրամ /Աղյուսակ 7/:



4.4 Շահույթի բաշխում

Ներդրումային ծրագրի իրականացման տևողությունը 15 տարի է, որոնց ընթացքում «Մաքս Մեդ» ՍՊԸ-ն նախատեսում է 2020 թվականից սկսած 10 տարիների ընթացքում ներդնել լրացուցիչ ***350.0 մլն*** **/երեք հարյուր հիսուն միլիոն/** ՀՀ դրամ:

Ծրագրի իրագործման ակնկալվող 15 տարիների ընթացքում ակնկալվում է 524.6 մլն ՀՀ դրամ զուտ շահույթի ստացում, որից հիմնադրի և կառավարչի մասհանումների մեծությունը և ժամանակացույցը բերվում է աղյուսակ 9-ում:

Ընդհանուր առմամբ հիմնադրին նախատեսվում է շահույթից մասհանումներ կատարել ներդրումների իրականացման տարվանից մինչև տասներեքերորդ տարին ներառյալ 20% չափով, իսկ տասնչորսերորդ և տասնհինգերորդ տարիներին՝ 40%:

Աղյուսակ 8

Հազար դրամ

Տարեթիվ	2019	2020	2021	2022	2023	2024	2025	2026
Զուտ շահույթ	**29,177**	**29,871**	**30,566**	**30,806**	**31,048**	**35,956**	**36,242**	**36,531**
Մասհանում հիմնադրին	**5,835**	**5,974**	**6,113**	**6,161**	**6,210**	**7,191**	**7,248**	**7,306**
Մասհանում հավատարմագրային կառավարչին	**23,341**	**23,897**	**24,453**	**24,644**	**24,838**	**28,765**	**28,993**	**29,225**

Աղյուսակ 8-ի շարունակություն

Տարեթիվ	2027	2028	2029	2030	2031	2032	2033	Ընդամենը
Զուտ շահույթ	**36,824**	**37,120**	**37,420**	**37,724**	**38,032**	**38,344**	**38,950**	**524,609**
Մասհանում հիմնադրին	**7,365**	**7,424**	**7,484**	**7,545**	**7,606**	**15,338**	**15,580**	**120,381**
Մասհանում հավատարմագրային կառավարչին	**29,459**	**29,696**	**29,936**	**30,179**	**30,426**	**23,006**	**23,370**	**404,229**

Այսպիսով ներդրումային ծրագրի իրագործման 15 տարիների ընթացքում հիմնադրին վճարվելիք շահաբաժնի չափը կազմում է շուրջ **120.3 մլն դրամ**, իսկ «Մաքս Մեդ» ՍՊԸ-ի օգուտը դրամական արտահայտությամբ կկազմի կկազմի 404.2 մլն ՀՀ դրամ:

Միևնույն ժամանակ կողմերի միջև կնքվող պայմանագրով պետք է նախատեսվի «Մաքս Մեդ» ՍՊԸ-ի կողմից կատարված ներդրումների հատուցման մեխանիզմ՝ «Գրիգոր Նարեկացի» բժշկական կենտրոն ՓԲԸ-ի բաժնետոմսերի տեսքով կամ ուղղակի դրամական հատուցման ձևով՝ հաշվի առնելով դրանց ապագա արժեքը (FV=590.7 մլն ՀՀ դրամ):

«Մաքս Մեդ» ՍՊԸ-ի կողմից 2020-2029թթ. կատարված կապիտալ ներդրումների ապագա արժեքը (FV) նույնպես հաշվարկված է դիսկոնտավորման 10% դրույքաչափով և տարեկան կտրվածքով ներդրումների ապագա արժեքները բերվում են ստորև.

Աղյուսակ 9

Հազար դրամ

N	Տարեթիվ	2020թ.	2021թ.	2022թ.	2023թ.	2024թ.	2025թ.	2026թ.	2027թ.	2028թ.	2029թ.	Ընդամենը
1	**Կապիտալ ներդրումներ**	54,000	46,000	31,250	31,250	31,250	31,250	31,250	31,250	31,250	31,250	**350,000**
2	**Կապիտալ ներդրումների ապագա արժեք (FV)**	59,400	55,660	41,594	45,753	50,328	55,361	60,897	66,987	73,686	81,054	**590,721**

4.5 *Բյուջետային արդյունավետություն և նախագծի սոցիալական գնահատական*

Սույն ծրագիրը համապատասխանում է կառավարության կողմից վարվող սոցիալ-տնտեսական քաղաքականությանը, մասնավորապես առողջապահության ոլորտի զարգացման հայեցակարգին: Այն հաշվի է առնում ոչ միայն ծրագրի անմիջական մասնակիցների շահերը, այլև տեղական ինքնակառավարման մարմինների, կառավարության

և հասարակության՝ ի հաշիվ.

1. Հանրապետության և մասնավորապես Երևանի սոցիալ-տնտեսական զարգացման հնարավորության.

- Ներդրումների ներգրավում՝ 350.0 մլն ՀՀ դրամ գումար չափով՝ լիովին արտաբյուջետային միջոցների հաշվին,
- Բյուջե վճարվող հարկերի ավելացում՝ շահութահարկի տեսքով 15 տարիների համար մոտ 131.2 մլն ՀՀ դրամով (միջին տարեկան 8.7մլն. ՀՀ դրամ), եկամտահարկի տեսքով՝ 1056.0 մլն. ՀՀ դրամ (միջին տարեկան 70.4մլն. ՀՀ դրամ), չհաշված մուտքերը պետական և համայնքային նշանակության այլ հարկերից։
- «Գրիգոր Նարեկացի» բժշկական կենտրոնի հիմնադրին՝ Երևանի քաղաքապետարանին շահույթի ապահովում՝ տարեկան միջին կտրվածքով մոտ 8.0 մլն ՀՀ դրամ։

2. Բնակչության շահերը.

- Թվով 30 նոր աշխատատեղերի ստեղծում,
- Մատուցվող առողջապահական որակյալ ծառայություններից օգտվելու հնարավորություն,
- Նոր ծառայություններից օգտվելու հնարավորություն,
- Մատուցվող ծառայությունների մրցունակ գների առաջարկում,
- Զեղչերից օգտվելու հնարավորություն։